ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գևորգյան Դիանա Սպարտակի

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կարեն Համլետի Գրիգորյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր,պրոֆեսոր Դավիթ Ներսիկի Հախվերդյան

տնտեսագիտության թեկնածու Գուրգեն Կառլենի Օհանյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի հուլիսի 30-ին, ժամը 15:30-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքվել է 2020 թ. հունիսի 18-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Լ. Հ. Գրիգորյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Արդի պայմաններում երկրի տնտեսության մրցունակության բարձրացման խնդիրները դարձել են օրակարգային: Աշխարհի բազմաթիվ երկրների կողմից վարվող ազատ առևտրային քաղաքականության արդյունքում էլ ավելի է սրվում համընդգրկուն մրցակցությունը՝ պահանջելով երկրի տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման առավել արդիական և ճկուն մեթոդների կիրառում: Պետք է նկատել, որ երկրի տնտեսության մրցունակությունը պայմանավորված է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների գործունեության արդյունավետությամբ:

Երկրի տնտեսության մրցունակություն տեսական հիմնախնդիրներն ուսումնասիրել են մի շարք տնտեսագետներ, այդ թվում՝ դասական դպրոցի ներկայացուցիչներ Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն, Կ. Մարքսը, նորդասական ուղղության ներկայացուցիչներ Ա. Մարշալը, Կ. Վիկսելը, ինչպես նաև նորդասական համադրության (սինթեզի) տեսության ներկայացուցիչներ Է. Չեմբեռլինը, Ջ. Ռոբինսոնը, Յո. Շումպետերը, Պ. Սամուելսոնը, Մ. Պորտերը և այլք:

Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի ձևավորման ու զարգացման, մենաշնորհների գործունեության կարգավորման ու երկրի տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման հիմնախնդիրներին են նվիրված Ա. Մարկոսյանի, Ա. Արշակյանի, Յու. Սուվարյանի, Մ. Մելքումյանի և մի շարք այլ տնտեսագետների աշխատություններ:

Տնտեսության մրցունակության բարձրացման խնդիրներն արդիական են նաև ՀՀ-ի համար: ԽՍՀՄ փլուզումից ՀՀ տնտեսությունը ենթարկվեց կառուցվածքային խոր փոփոխությունների: Հիմնովին կերպափոխվեցին տնտեսական հարաբերությունները, քայքայվեցին տնտեսավարման կառուցակարգերը, կապերն ու փոխհարաբերությունները:

Այժմ, երբ ՀՀ տնտեսությունը թևակոխել է զարգացման նոր փուլ, երկրում մրցունակության բարձրացման խնդիրներն ավելի են սրվել: Վերջին տասնամյակներում ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող զարգացումների հիմնական բնութագրիչներից էր մենաշնորհային շուկաների առկայությունը: Դրանք խաթարում էին առողջ մրցակցային հարաբերությունները՝ խոչընդոտելով տնտեսության մրցունակության բարձրացմանը: Որպես հետևանք՝ տարեցտարի աճում էր արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը՝ նոր մարտահրավերներ նետելով տնտեսության բնականոն զարգացմանը:

ՀՀ-ում տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման տեսանկյունից առանցքային են նաև արդյունավետ ինստիտուտների ու ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման նպատակները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակը ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց հաղթահարման կառուցակարգերի մշակումն է՝միտված համաշխարհային տնտեսական հարաբերություններում ՀՀ կազմակերպությունների դիրքերի ամրապնդմանը, դրանց կողմից թողարկվող ապրանքների ու ծառայությունների իրացման ծավալների ընդլայնմանը:

Նշված նպատակի իրագործման համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

1. հետազոտել երկրի տնտեսության մրցունակության տեսամեթոդաբանական հիմքերը,
2. համակողմանիորեն դիտարկել երկրի «տնտեսության մրցունակություն» հասկացության վերաբերյալ մոտեցումները,
3. բացահայտել երկրի տնտեսության մրցունակության արդի գործոնների առանձնահատկությունները,
4. ուսումնասիրել տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային առաջավոր փորձը և բացահայտել ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները,
5. վերլուծել ՀՀ տնտեսության մրցունակության արդի վիճակը,
6. իրականացնել ՀՀ տնտեսության, մրցունակության գործոնների գնահատում,
7. բացահայտել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական խոչընդոտներն ու մատնանշել դրանց հաղթահարման հիմնուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է՝ որպես մեկ ամբողջություն և բազմաթիվ փոխկապակցված տարրերից բաղկացած համակարգ, իսկ առարկան ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիներն են:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական ճանաչողության (վերացարկման, վերլուծության և համադրման, պատմական և տրամաբանական) մեթոդները, որոնք թույլ են տվել դիտարկել գիտական դրույթների տրամաբանական կառուցվածքը, ընդգծել դրանց ուժեղ ու թույլ կողմերը: Դրանք հնարավորություն են տվել լուծելու հետազոտության մեջ առաջադրված խնդիրները:

Առաջադրված խնդիրների լուծման համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայրենական տնտեսագետների գիտական աշխատանքները:

Ատենախոսության համար որպես տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի, էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունների և ԿԲ-ի կողմից հրապարակվող պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հրապարակումները: Կատարված հետազոտության համար օրենսդրական հիմք են հանդիսացել ՀՀ օրենքները և նորմատիվաիրավական ակտերը:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության շրջանակներում բացահայտվել և հիմնավորվել են ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրների արդի դրսևորումները, ինչպես նաև առաջարկվել են դրանց հաղթահարման մոտեցումներ:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում ստացվել են մի շարք դրույթներ, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

1. Տրվել է «տնտեսության մրցունակություն» հասկացության նոր բնորոշում, որտեղ որպես առանցքային բնութագրիչ է դիտարկվել տնտեսական քաղաքականության ինստիտուտների արդյունավետությունը՝ միտված մարդկային, կապիտալ և բնական ռեսուրսների օգտագործման օպտիմալ մեծացման շնորհիվ տևական ժամանակահատվածում կենսամակարդակի կայուն աճի ապահովմանը:
2. Տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային առաջավոր փորձի քննական վերլուծության արդյունքում բացահայտվել են դրա հիմնարար դրույթներն ու հստակեցվել ՀՀ-ում վերջինների կիրառման հնարավորությունները:
3. Տնտեսաչափական մոդելի միջոցով իրականացվել է ՀՀ տնտեսության մրցունակության գործոնների վերլուծություն, ինչը հնարավորություն է տվել պարզելու առավել ազդեցիկ գործոնների շրջանակն ու բացահայտելու դրանց ներուժի առավել լիարժեք օգտագործման հնարավորությունները:
4. Մշակվել են ՀՀ տնտեսության մրցունակության գնահատման մոդել և բանաձև, որտեղ որպես հիմնական հենասյուներ դիտարկվել են տնտեսական արդյունավետությունը, տեխնոլոգիական զարգացածությունը, մարդկային ռեսուրսները, կառավարման ու արտադրության արդյունավետությունը՝ համապատասխան ենթաբաժիններով:

Ատենախոսության գործնական և տեսական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ հետազոտության ընթացքում բացահայտված դրույթները կարող են օգտագործվել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված տնտեսական քաղաքականության մշակման գործընթացում: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունները կարող են ունենալ նաև ընդգծված գիտական նշանակություն և օգտագործվել տնտեսության պետական կարգավորման տեսագործնական հիմքերի վերաբերյալ դասընթացների դասավանդման գործընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունում ներկայացված հիմնական մոտեցումները և հետազոտության արդյունքներն արտացոլված են հրապարակված յոթ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը պարունակում է 34 աղյուսակ, 29 գծապատկեր, շարադրված է 168 մեքենագիր էջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը, ձևակերպված են ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը, ներկայացված են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Երկրի տնտեսության մրցունակության տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացվում են մրցունակության էությունը և գործոնները, գնահատման մեթոդաբանությունը, մրցունակության ռազմավարությունը, ուսումնասիրվել է տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային փորձը: Մրցունակությունը բարդ ու բազմաբովանդակ հասկացություն է: Լայն առումով՝ այն բնութագրում է տարբեր մակարդակներում ապրանքների և ծառայությունների, ընկերությունների, արտադրության ոլորտների, տարածաշրջանների և ազգային տնտեսության մրցակցային առավելությունները: **Տնտեսության մրցունակությունը**

բնութագրվում է տնտեսական քաղաքականության ինստիտուտների, ոչ տնտեսական գործոնների, ընկերությունների և տնային տնտեսությունների գործունեության արդյունավետությամբ և դրանց միջև կայուն օպտիմալ փոխհարաբերություններով, ինչը պայմանավորում է սահմանափակ ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը՝ հանգեցնելով բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Ըստ էության, հակված ենք առաջարկելու այն դրույթը, որ երկարաժամկետում տնտեսության մրցունակության բարձր դիրք գրավելու համար շեշտը պետք է դնել տնտեսական քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետության բարձրացման վրա:

«Տնտեսության մրցունակություն» հասկացության այս մոտեցմամբ բնորոշումը թույլ է տալիս գնահատել մրցունակության վրա ազդող առաջնային գործոնները: Մրցունակության տեսական վերլուծության ժամանակ դասական, նորդասական և ժամանակակից տնտեսագիտության ներկայացուցիչները, ինչպես նաև մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովները և տարբեր միջազգային կազմակերպություններ հիմնականում առաջ են քաշում տնտեսության մրցունակության սահմանման փոխլրացնող և միանման գործոններ:

Ներկայումս մասնագիտական գրականության մեջ առավել լայն տարածում են ստացել Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) և Մենեջմենթի զարգացման միջազգային հիմնադրամի (ՄԶՄՀ) մոտեցումները: ՄԶՄՀ մոտեցումը հիմնված է Մ.Պորտերի «Մրցակցային ադամանդի» տեսության վրա, ՀՏՖ մոտեցումները՝ ազատ առևտրի զարգացման փուլերի տեսության վրա: Ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը, ի թիվս այլ նպատակների, միտված է միջազգային շուկայում երկրի տնտեսական դիրքերի ամրապնդմանը:

Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման տեսանկյունից զարգացող երկրները, որոշակի առումով, շահեկան դիրքում են: Վերջինները հնարավորություն ունեն իրենց ազգային ռազմավարությունները մշակելիս առաջնորդվել համաշխարհային առաջավոր ուսանելի փորձի դրույթներով, ինչը հնարավորություն կտա խուսափելու զարգացած երկրների բացթողումներից: Սակայն օտարերկրյա կազմակերպությունների կամ պետական կառավարման մարմինների վարած քաղաքականությունը կարող է որպես օրինակ ծառայել երկրի զարգացման միայն սկզբնական շրջանում. հետագա զարգացման համար պետք է ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ տնտեսության մրցունակության արդի վիճակի և մակրոտնտեսական հիմնախնդիրների վերլուծու-

թյուն» գլխում կատարվել է ՀՀ տնտեսության մրցունակության մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծություն և գնահատվել է ՀՀ տնտեսության մրցունակությունը: 2015 թ. հունվարի 2-ից ՀՀ-ն դարձավ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) լիիրավ անդամ[1]: ԵԱՏՄ-ում իրականացվում է մակրոտնտեսական համաձայնեցված քաղաքականություն, որի վարման հիմնական ուղղություններն են միության անդամ երկրների տնտեսությունների գործունեության նույնական սկզբունքների ձևավորումը, տնտեսությունների արդյունավետ փոխգործակցության ապահովումը, ինչպես նաև կողմերի սոցիալ-տնտեսական զարգացման տեսության միասնական սկզբունքների և ուղղությունների մշակումը[2]: Ուստի նախընտրելի է ՀՀ ազգային տնտեսության մրցունակության վերլուծությունը կատարել ԵԱՏՄ կազմի մեջ մտնող երկրների՝ Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի Դաշնության տնտեսությունների հետ համեմատության մեջ:

ՀՀ տնտեսության զարգացման կարևորագույն հարցադրումներից մեկը մնում է այն, թե ինչ է ՀՀ-ն առաջարկում աշխարհին և ինչ ստանում աշխարհից: Արտաքին առևտրաշրջանառության ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ավելի ակներև է դարձնում երկրում առկա իրական տնտեսական հիմնախնդիրները:

ՀՀ-ն հիմնականում արտահանում է հանքահումքային արտադրանք. 2017 թ. Հայաստանից արտահանված ամենաբարձր մաքսային արժեք ունեցող ապրանքը, ինչպես և 2016-ին, պղինձն է: Նախորդ տարի Հայաստանից արտահանվել է 925 հազ. տոննա պղնձի խտանյութ: 2016 թ. համեմատությամբ արտահանման ծավալն աճել է 185 հազ. տոննայով: Հայաստանից պղնձի խտանյութի արտահանման ծավալը մեկ տարում աճել է 25%-ով, բայց մաքսային արժեքի աճը կազմել է 35%: Սա ինքնին նշանակում է, որ նախորդ տարի խտանյութն ավելի էժան է արտահանվել, քան 2016-ին: Դա էլ իր հերթին նշանակում է, որ նախորդ տարի Հայաստանի ընդերքն ավելի անարդյունավետ է «դատարկվել», քան 2016 թ.:

Վերջին տարիներին ***ՀՀ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը*** դրսևորել է աճի միտում: 2017 թ. այն կազմել է 1859.4 հազար ԱՄՆ դոլար, ինչը գրեթե հավասար է արտահանման ծավալին: Գաղտնիք չէ, որ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը բացասական ազդե-

---

[1] Отчет Евразийской экономической комиссии 2012-2015,http://www.eurasiancommission.org/ru/Documents/EEC_ar2015_preview.pdf, p. 28, 301, 14.11.2017

[2] ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Միջազգային կազմակերպություններ՝ ԵԱՏՄ, https://www.mfa.am/hy/international-organisations/6. 21.11.2017

ցություն է թողնում երկրի տնտեսության վրա, և արտահանման խթանումը պետք է դիտարկել որպես ՀՀ տնտեսական քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկը:



Գծապատկեր 2.1.4. ՀՀ ներմուծման և արտահանման շարժընթացը 2008-2017 թթ. (հազար ԱՄՆ դոլար)[3]

Տնտեսության մրցունակության գնահատման տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի նաև պետական հատվածի ֆինանսների և դրանց կառավարման արդյունավետության գնահատումը: 2015-2016 թթ. գրանցվել է ՀՆԱ 4.8 և 5.5 տոկոս նվազեցում , և ՀՀ հարկաբյուջետային կանոնով սահմանված ՀՆԱ 50 տոկոսի շեմը գերազանցող պարտքի պայմաններում[4] Կառավարությունը 2017 թ. բյուջեով սկսեց հարկաբյուջետային համախմբումը: Այսպես՝ 2017 թ., նախորդ տարվա նկատմամբ, պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 1.3%-ով անկում: ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2017 թ. նվազել են 1.2%-ով, որից ընթացիկ ծախսերի գծով արձանագրվել է աճ՝ 0.5%-ի չափով (գծապատկեր 2.1.12):

---

[3] ՀՀ արտահանումը և ներմուծումը ըստ ապրանքախմբերի՝ ԱՊՀ և այլ երկրների կտրվածքով, ՀՀ վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, https://www.armstat.am/file/doc/99510828.pdf, 2017՝ էջ 450, 2014՝ էջ 445, 2011՝ էջ 449:

[4] «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը ներառում է պարտքի առավելագույն խիստ շեմ՝ նախորդ տարվա ՀՆԱ 60 տոկոսի չափով և «պարտքի արգելակ»՝ նախորդ տարվա ՀՆԱ 50 տոկոսի չափով, որի դեպքում գործում է վերջին երեք տարիների միջին ՀՆԱ 3 տոկոսից պակաս բյուջեի պակասուրդի պահանջը: Կանոնն ունի կոշտ առավելագույն շեմ. ՀՆԱ 60 տոկոս առավելագույն շեմի գերազանցման դեպքում այլևս չի կարելի պարտք թողարկել:



Գծապատկեր 2.1.12. ՀՀ պետական եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)[5], 2008-2017 թթ.

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2,875.6 մլրդ ՀՀ դրամ կամ 5,942.1 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ պետական պարտքի ծավալն աճել է 419.3 մլրդ ՀՀ դրամով կամ 864.4 մլն ԱՄՆ դոլարով, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքի ծավալը՝ 13.8 մլրդ ՀՀ դրամով կամ 28.3 մլն ԱՄՆ դոլարով (գծապատկեր 2.1.13): Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 56.6%՝ նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի լինելով 7.9%-ային կետով, որը հիմնականում պայմանավորված է եղել պետական պարտքի առաջանցիկ աճով (պետական պարտքն աճել է 17.1%-ով, այն դեպքում, երբ անվանական ՀՆԱ աճի տեմպը կազմել է 0.7%):

Երկրի տնտեսության մրցունակության գնահատման մեկ այլ առանցքային ցուցանիշ է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: Վերջինս, լայն առումով, պայմանավորում է գնողունակ պահանջարկի մեծությունը՝ հիմքեր նախապատրաստելով ներքին շուկայում առողջ մրցակցային միջավայրի ձևավորման համար: ՀՀ-ում 1 շնչի հաշվով ՀՆԱ շարժընթացը 2008-2017 թթ. կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.

[5] ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ, ՀՀ վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, https://www.armstat.am/file/doc/99510818.pdf 2017թ.՝ էջ 389-390,2012 թ.՝ էջ 383-384:



Գծապատկեր2.1.20. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով ՀՀ-ում 2008-17 թթ. (հազ.դրամ)[6]

2017 թ. ՀՀ-ում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1869.1 հազար դրամ: 2010-2013 թթ. ցուցանիշը գրանցել է շարունակական աճ: Ճգնաժամային 2009 թ. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով կազմել է 968.5 հազար ՀՀ դրամ, նախաճգնաժամային 2008-ին՝ 1103.3 հազար ՀՀ դրամ աճել է 69.4%-ով: «Հայաստանի Հանրապետության 2012-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով» նախատեսվում է, որ 2025 թ., 2011 թ. համեմատությամբ, մեր երկրի բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն պետք է եռապատկվի[7]:

2008-2017 թթ. ընթացքում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ավելացել է 2,3%-ով: Իրական ՀՆԱ-ն ժամանակի ընթացքում այդպես էլ չի ավելացել, սակայն մեկ շնչի հաշվով աճ է գրանցել: Սրա պատճառն այն է, որ իրականում տեղի է ունեցել Հայաստանի մշտական բնակչության նվազում (10 տարվա ընթացքում ավելի քան 100 հազար մարդ), ինչի հաշվին էլ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն աճ է գրանցել[8]:

ՀՀ-ում ՀՆԱ աճը գերազանցապես կախված է շինարարության և ծառայությունների ոլորտների աճից: Աճի կառուցվածքում մեծ մասնաբաժին ունի նաև գյուղատնտեսությունը: Սակայն այս ոլորտների աճը տարեցտարի դանդաղում է: Շինարարության և ծառայությունների

---

[6] Տնտեսական ցուցանիշներ, ՀՀ վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, https://www.armstat.am/file/doc/99510948.pdf 2017թ.՝ էջ 227, 2012թ.՝ էջ 227, 21.10.2017

[7] ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, http://www.gov.am/files/docs/1322.pdf, էջ 27 (217), 21.10.2017

[8] ԱՐՄԵՆՊՐԵՍ հայկական լրատվական գործակալություն, Մ.Հովսեփյան «Ելման կետ». տասնամյակի տնտեսական աճի պատկերի համաձայն՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն ավելացել է բնակչության կրճատման հաշվին, https://armenpress.am/arm/news/945438.html

ոլորտները ՀՀ-ում զգալիորեն կախված են օտարերկրյա ներդրումներից և արտաքին տրանսֆերտներից: Հետևաբար՝ ՀՀ-ն մեծ մասամբ կախված է այդ հոսքերից, որոնք կարող են որոշ ժամանակ հետո դադարել, ինչը կհանգեցնի խոր տնտեսական ճգնաժամի: Կախված լինելով օտարերկրյա ներդրումներից և արտաքին տրանսֆերտներից՝ ՀՀ-ն ազգային արժույթի կայունության ապահովման առումով առնչվում է լուրջ խնդիրների: Ազգային արժույթի ամրապնդման խնդիրը հանգեցնում է նրան, որ ՀՀ-ն կորցնում է իր մրցակցային առավելությունները միջազգային շուկայում, ինչի արդյունքում արդյունաբերությունը մեծ կորուստներ է կրում: Մասնավորապես՝ նշանակալի են գյուղատնտեսության, վերամշակվող արդյունաբերության կորուստները, ինչի մասին վկայում են ՀՆԱ կառուցվածքը և առևտրային հաշվեկշիռը:

ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման վրա բացասական է ազդում նաև արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը, որը դինամիկ աճի միտում է դրսևորում: Այսպիսով՝ ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման առումով առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծման համար պետք է ներդաշնակել պետական և մասնավոր հատվածների ռեսուրսներն ու ջանքերը:

Ատենախոսության երրորդ՝ «**ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման ուղիները**» **գլխում** կատարվել են մրցունակության բարձրացման ուղիների բացահայտում և տնտեսության մրցունակության գնահատում տնտեսաչափական մոդելի միջոցով: Տնտեսության մրցունակության գնահատականը հուշում է, թե ինչպիսի մակրոտնտեսական քաղաքականություն պետք է վարել և ինչպիսի որոշումներ կայացնել ռեսուրսները վերաբաշխելիս: Ազգային տնտեսության մրցունակության և տնտեսական աճի միջև կապը որոշելու համար բոլոր տնտեսությունները դասակարգում ենք ըստ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի՝ օգտագործելով Համաշխարհային բանկի Ատլասի մեթոդը[9]: Գործոնների միջև առկա պատճառահետևանքային կապի վերլուծությունը կատարվել է Գրանժերի պատճառահետևանքային թեստի միջոցով[10]: Տնտեսաչափական մոդելի միջոցով գնահատվել է ՀՄՀ-ի վրա տարբեր գործոնների ազդեցությունը: Տնտեսության մրցունակության գնահատման նոր մոդելում դրանք բաժանվում են 5 հենասյան՝ տնտեսական արդյունավետություն,

---

[9] The World Bank Group, The World Bank Atlas method - detailed methodology, https://datahelpdesk.worldbank.org/knowledgebase/articles/378832-what-is-the-world-bank-atlas-method, 20.11.2017

[10] Science Direct, Granger Causality Test, https://www.sciencedirect.com/topics/neuroscience/granger-causality, 20.10.2017

տեխնոլոգիական զարգացման մակարդակ, մարդկային ռեսուրսներ, կառավարման արդյունավետություն և արտադրության արդյունավետություն: Յուրաքանչյուր հենասյուն ունի իր ենթաբաժինները, որոնք ավելի մանրամասն նկարագրում են դրա նշանակությունը:

3.2 բաժնի տվյալների հիման վրա կատարվել է 2003-2017 թթ. վերլուծություն, հաշվարկվել է ազգային տնտեսության մրցունակությունը վերը նշված մոդելի միջոցով: Ներկայացված աղյուսակներում օգտագործվել են Համաշխարհային բանկի, Մենեջմենթի զարգացման ազգային հիմնադրամի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և այլ միջազգային կառույցների կողմից հրապարակված՝ ՀՀ տնտեսությանը վերաբերող ցուցանիշները:

ՀՀ մրցունակության մոդելը կառուցելու համար օգտագործվել են տարբեր ցուցանիշներ՝ դրանք համատեղելով մեկ բանաձևում: Համադրելի դարձնելու նպատակով ցուցանիշները ստանդարտացվել են, և գործոնային վերլուծության միջոցով տրվել է յուրաքանչյուր ցուցանիշի կշիռը: Գործոնային վերլուծությունը տրված մեծության վրա ազդող գործոնների համակարգված և ամբողջական ուսումնասիրությունն է: Դրա փուլերն են.

1. գործոնների որոշում,
2. գործոնների դասակարգում և համակարգում,
3. փոխկապակցված գործոնների մոդելավորում,
4. գործոններից յուրաքանչյուրի ազդեցության չափի որոշում տրված մեծության վրա:

Աղյուսակ 3.2.8 Ազգային տնտեսության մրցունակությունը 2003-2016 թթ.

Տարի	Զբաղեցրածդիրք	Տարի	Զբաղեցրածդիրք
ԱՏՄ$_{2003}$	8.1	ԱՏՄ$_{2010}$	7.3
ԱՏՄ$_{2004}$	8.4	ԱՏՄ$_{2011}$	7.5
ԱՏՄ$_{2005}$	8.6	ԱՏՄ$_{2012}$	7.8
ԱՏՄ$_{2006}$	8.8	ԱՏՄ$_{2013}$	6.3
ԱՏՄ$_{2007}$	8.7	ԱՏՄ$_{2014}$	6.7
ԱՏՄ$_{2008}$	6.1	ԱՏՄ$_{2015}$	6.3
ԱՏՄ$_{2009}$	3.1	ԱՏՄ$_{2016}$	6.4

Ինչպես հայտնի է, որքան բարձր է մրցունակության ցուցանիշը, այնքան բարձր է նաև բնակչության կենսամակարդակը, հետևաբար և բարձր է լինում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: Այդ իսկ պատճառով հետազոտվել է ԱՏՄ-ի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև ռեգրեսիոն կապը:



Գծապատկեր 3.2.1. Ազգային տնտեսության մրցունակության կառուցվածքը

Ռեգրեսիայի միջոցով փորձ է արվել բացահայտելու ԱՏՄ համաթվի և ՀՆԱ աճի տեմպի փոխառնչությունը: Ինչպես վկայում են վերլուծության արդյունքները, ԱՏՄ-ն զգալի ազդեցություն ունի ՀՆԱ աճի տեմպի վրա. ԱՏՄ միավոր փոփոխությունը հանգեցնում է ՀՆԱ աճի տեմպի մեկ տոկոս փոփոխության: Դրա մասին են վկայում t վիճակագրության աղյուսակային կրիտիկական արժեքներից մեծ ստացված արժեքները, ինչպես նաև նշանակալիության աստիճանի փոքր լինելը:

Արդյունքներից պարզ է դառնում, որ 2008 թ.-ի վեր ԱՏՄ ցուցանիշը նվազման միտում ունի, ինչը վկայում է այն մասին, որ ՀՀ-ն կորցնում է իր մրցունակության դիրքը համաշխարհային շուկայում:

Այսպիսով՝ ամփոփելով վերը շարադրվածը, եզրահանգում ենք.

1. Առաջարկվող մոդելը ավելի ճշգրտորեն է հաշվարկում մրցունակությունը, քան ՀՏՖ-ն, քանի որ հիմնված է ճշգրիտ ցուցանիշների վրա:
2. 2008 թ. ի վեր ԱՏՄ-ն ունի անկման հակում, որը և վկայում է համաշխարհային շուկայում ՀՀ մրցակցային դիրքի նվազման մասին:
3. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ առաջարկված մոդելը կարող է կանխատեսել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, հետևաբար և կարող է կանխատեսել տնտեսական աճը:

Ազգային մրցունակության համադրելի ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$ԱՏՄ=W_1 \sum_{j=1}^{n1} m_{1j}\, ՏԱ_j + W_2 \sum_{j=1}^{n2} m_{2j}\, ՏՀ_j + W_3 \sum_{j=1}^{n3} m_{3j}\, ԿԱ_j + W_4 \sum_{j=1}^{n4} m_{4j}\, ՄՌ_j + W_5 \sum_{j=1}^{n5} m_{5j}\, ԱԱ_j$$

որտեղ՝ ԱՏՄ-ն տվյալ երկրի ազգային տնտեսության մրցունակության ցուցանիշն է,

W_i-ն՝ i-երորդ ցուցանիշի գնահատականը (i=1,2,3,4,5),

m_{ij}-ն՝ j-երորդ ենթացուցանիշի գնահատականը (j=1,2,3…n_j),

ՏԱ-ն՝ տնտեսական արդյունավետության j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը,

ՏՀ-ն՝ տեխնոլոգիական զարգացածության j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը,

ՄՌ-ն՝ մարդկային ռեսուրսների j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը,

ԿԱ-ն՝ կառավարման արդյունավետության j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը,

ԱԱ-ն՝ արտադրության արդյունավետության j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը:

«Եզրակացություն» բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում կատարված հետևյալ եզրահանգումները, բացահայտված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները.

1. ՀՀ-ում պետք է վարվի նպատակային և հասցեական քաղաքականություն՝ միտված պետական և մասնավոր հատվածների ջանքերի համախմբմամբ ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանը: Մասնավորապես՝ առաջարկում ենք արտահանման կողմնորոշում ունեցող ընկերություններին տրամադրել հարկային վարկ, սահմանել արագացված ամորտիզացիոն ժամկետներ, նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիաների ներկրման դեպքում կիրառել նվազեցված մաքսային դրույքաչափեր: Վերոնշյալ առաջարկության հիմնավորումն այն է, որ տնտեսու-

թյան մրցունակության բարձրացումն անհնար է առանց պետության ակտիվ միջամտության: Տնտեսության մրցունակության շարունակական աճը պետք է ապահովվի պետության մշտական վերահսկողության և համապատասխան մրցակցային քաղաքականության իրականացման միջոցով: Սակայն պետական միջամտությունն էլ պետք է ունենա իր սահմանները, որպեսզի չվերացնի տնտեսավարող սուբյեկտների խթանները և ազատությունը, որոնք շուկայական տնտեսության կարևոր բնութագրիչներից են:

2. Անհրաժեշտ է կառուցվածքային բարեփոխումների միջոցով կրճատել ՀՀ մրցակցային դիրքերի վրա ազդող բացասական գործոնները, իսկ դրական գործոնները կատարելագործել, ինչն, անշուշտ, իր ազդեցությունը կունենա ՀՀ մրցակցային միջավայրի բարելավման վրա: Ներկա փուլում ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման համար կարևոր նախադրյալ է ներդրումների ծավալների ավելացումը: Քանի որ ներքին ներդրումների աղբյուրները սահմանափակ են, ուստի շեշտը պետք է դնել օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա, իսկ մասնավոր խնայողությունները ավանդներից ուղղել դեպի ներդրումներ: Դրա համար անհրաժեշտ է ներդրումները հնարավոր ռիսկերից ապահովագրելու համար ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխանող ապահովագրական համակարգ, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտը դարձնել կանխատեսելի և կայուն, ներդրումներն ուղղել դեպի տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարությունների և նորամուծությունների, ինչպես նաև արտահանման ներուժ ունեցող ոլորտների ֆինանսավորում, ինչի արդյունքում կաճեն երկրի տնտեսական զարգացման հնարավորությունները:

3.ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման հարցում հատկապես մեծ է փոքր և միջին ձեռնարկությունների և կլաստերների դերը: Թեև ՓՄՁ-ները, ի տարբերություն խոշոր կորպորացիաների, չունեն մեծ ֆինանսական հնարավորություններ, սակայն փոխարենն ունեն փոփոխություններին արագ արձագանքելու մեծ առավելություն: Զարգացած ՓՄՁ-ները կարող են միավորվել միասնական համակարգում՝ ձևավորելով վերջնական արդյունքի փակ շղթա, ինչն էլ կհանդիսանա տնտեսության կլաստերացման փիլիսոփայության հիմքը: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք ինստիտուցիոնալ բարեփոխումների հիմնական ուղենիշ դարձնել կլաստերների ձևավորման և զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովումը, ինչը պետք է իրականացվի ՓՄՁ-ով զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մասնագիտական վերապատրաստման, հարկային վարչարարության մեխանիզմների հստակեցման և ՓՄՁ սուբյեկտների միջև ակտիվ համագործակցության պայմաններ ստեղծելու միջոցով:

4.ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման լուրջ խոչընդոտ է ստվերային տնտեսության մեծ ծավալների առկայությունը: Այս առումով, անհրաժեշտ է լուրջ քայլեր ձեռնարկել ստվերային հատվածի ծավալների կրճատման ուղղությամբ: Մասնավորապես, հարկավոր է վերացնել արհեստական մենաշնորհները, բացառել արտոնյալ կարգավիճակը՝ մի կողմից, մյուս կողմից՝ մեղմել հարկային բեռը և խստացնել պատժամիջոցները, ինչը օրինական դաշտում գործելը կդարձնի առավել ցանկալի:

5. Ըստ համաշխարհային մրցունակության համաթվի հենասյուների՝ ՀՀ-ն նկատելիորեն բարելավել է դիրքերը, սակայն իրավիճակը դեռևս գոհացուցիչ չէ, ինչի հիմնավորումը տարեցտարի խորացող արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդն է: Այս պայմաններում անհրաժեշտ է ընտրել ազգային տնտեսության զարգացման այնպիսի մոդել, որը հնարավորություն կտա սահուն կերպով կրճատելու այդ մնացորդը ոչ թե ներմուծման կրճատման, այլ արտահանման աճի շնորհիվ:

Որպես զարգացման այդպիսի մոդել առաջակում ենք առավելապես գիտատար՝ հատկապես ՏՀՏ ոլորտի խթանումը, ինչպես նաև ՏՏ-ների օգտագործումը տնտեսության այլ ճյուղերում, ինչը հնարավոր է միայն մարդկային կապիտալի զարգացման շնորհիվ: Այս առումով, ուսանելի և օրինակելի կարող է լինել հատկապես Իռլանդիայի փորձը, քանի որ ինչպես այդ երկրում, այնպես էլ Հայաստանում տնտեսության ներուժը կենտրոնացած է մարդկային կապիտալում:

Տնտեսաչափական մոդելով իրականացրած գործոնային վերլուծությունը հիմք է տալիս առաջարկելու նաև այն դրույթը, որ երկարաժամկետում տնտեսության մրցունակության բարձր դիրք գրավելու համար շեշտը պետք է դնել տնտեսական քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետության բարձրացման վրա: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ առաջարկված մոդելը կարող է կանխատեսել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, հետևաբար և կարող է կանխատեսել տնտեսական աճ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գևորգյան Դ.Ս., Մակրոտնտեսական քաղաքականությունը և ազգային մրցունակության բարձրացումը, «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում», բաժանմունք I, ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2015, N 11-13, 320 էջ, էջ 83-86:
2. Գևորգյան Դ.Ս., ՀՀ ազգային մրցունակության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը, «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում», բաժանմունք II, ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2015, N 11-13, 714 էջ, էջ 87-91:
3. Գևորգյան Դ.Ս., Ազգային տնտեսության բարձրացման ռազմավարական խնդիրները, «Ֆինանսներ և էկոնոմիկա», Եր., 2017, N 9-10 (205-206), 188 էջ, էջ 15-18:
4. Գևորգյան Դ.Ս., Ազգային տնտեսության էությունը և կառուցվածքը, «Ֆինանսներ և էկոնոմիկա», Եր., 2018, N 1-2 (209-210), 226 էջ, էջ 97-99:
5. Գևորգյան Դ.Ս., Ազգային տնտեսության մրցունակության և տնտեսական աճի միջև կապը, «Ֆինանսներ և էկոնոմիկա», Եր., 2018, N 3-4 (211-212), 185 էջ, էջ 95-99:
6. Գրիգորյան Կ.Հ., Գևորգյան Դ.Ս., Ազգային տնտեսության մրցունակության և նորարարական համակարգի փոխկապվածությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2018, 1 (652), հունվար-ապրիլ, 357 էջ, էջ 184-196:
7. Գևորգյան Դ.Ս., ՀՀ տնտեսության մրցունակության վերլուծությունը և գնահատումը, «Բանբեր ՀՊՏՀ», 2019 N1, Եր., 204 էջ,էջեր 107-118

ГЕВОРГЯН ДИАНА СПАРТАКОВНА

МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ЭКОНОМИКИ РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление хозяйством и его сферами».

РЕЗЮМЕ

Конкурентоспособность является важным фактором для любой экономики, фундаментом которой является международная торговля. Конкурентоспособность является показателем состояния и перспектив развития хозяйственной системы, определяет характер ее участия в международном разделении труда, выступает гарантом экономической безопасности и в общем виде представляет собой способность страны в условиях свободной конкуренции производить товары и услуги, удовлетворяющие требованиям мирового рынка, реализация которых положительно отражается на благосостоянии населения.

Цель и задачи исследования:Основная цель исследования - выявить макроэкономические проблемы повышения конкурентоспособности экономики РА и разработать механизмы их преодоления,конечной целью которого является укрепление позиции или роли в международных экономических отношениях, в связи с расширением объемов продаж товаров и услуг производимых в Армении.

Для достижения этой цели были поставлены и решены следующие задачи:

1. Исследовать теоретико-методологические основы экономической конкурентоспособности стран;
2. Всесторонне изучить научные подходы понятия “конкурентоспособность экономики страны”,
3. Выявить особенности конкретных факторов конкурентоспособности экономики страны;
4. Изучить передовую международную практику повышения конкурентоспособности экономики и выявить возможности ее применения в Республике Армения,
5. Проанализировать нынешнее состояние конкурентоспособности экономики Армении,
6. Осуществить оценку факторов конкурентоспособности национальной экономики Армении;
7. Выявить макроэкономические барьеры повышения конкурентоспособности экономики Армениии, указать основные направления их преодоления.

Основные научные результаты и новизна диссертационной работы: Научной новизной исследовательских и аналитических работ в диссертации являются:

- Было дано новое определение понятия «конкурентоспособность экономики», где в качестве основной характеристики просматривается эффективность институтов экономической политики, направленная на повышение оптимального использования человеческих, капитальных и природных ресурсов, что приводит к стабильному росту благосостояния населения.
- На основе исследования и анализа передового международного опыта повышения конкурентоспособности экономики были выявлены основополагающие факторы повышения конкурентоспособности и уточнены возможности их применения в РА.
- С помощью эконометрической модели был проведен анализ факторов конкурентоспососбности экономики РА, что дало возможность определить круг наиболее влиятельных факторов и выявить возможности оптимального использования их потенциала.
- Были разработаны новая модель и формула оценки конкурентоспособности, в основу которых лежат экономическая эффективность, технологическое развитие, человеческие ресурсы, эффективность управления и производительности с соответствующими составляющими.

DIANA SPARTAK GEVORGYAN

MACROECONOMIC ISSUES OF INCREASING THE ECONOMIC COMPETITIVENESS OF RA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Philosophy in Economics the specialty 08.00.02 – «Economics, management of the economy and its spheres».

ABSTRACT

Competitiveness is an important factor for any economy that relies on international trade. In current conditions, the issues of increasing .country's economic competitiveness have become topical. As a result of a free trade policy defined by different countries, universal competition is becoming more urgent requiring to apply modern and flexible methods. Competitiveness of the country is an indication of the status and prospects of economic system development, determines the nature of its participation in an international division of labor, acts as a guarantee of economic security and actually it is the ability of the country in conditions of free competition to produce goods and services that meet the demands of the world market, and the realization of it increases the well-being of population. Competitiveness allows countries to improve the economy which helps to expand their markets. Due to its complexity and multifaceted nature, the indicator of competitiveness is one of those few ones, which can evaluate the perspectives of the country's development , and that is very important for the forecasting and elaboration of national strategy.

The purpose and objectives of the research: The main goal of the study is to identify macroeconomic issues concerning the increase of competitiveness of the economy of RA and develop mechanisms to overcome them, the ultimate goal of which is the strengthening the status of Armenian companies in world economic relations, expanding the volume of sales and services provided by them. For this purpose the following issues have been settled and solved:

1. analysis of the theoretical methodological basis,
2. comprehensive consideration of approaches towards «economic competitiveness» of the country,
3. identification of the specific features of the national economy's competitiveness,
4. exploration of international best practice of raising the competitiveness of the economy and revealing the possibilities for its application in the Republic of Armenia,
5. analysis of the current state of competitiveness of Armenian economy,
6. evaluation of the competitiveness factors of the Armenian national economy,
7. identification of the economic competitiveness and macroeconomic issues of RA.

The main scientific results and novelty of the thesis: The novelty of the research and analytical work of the thesis is the following:

- A new definition was given to the term «economic competitiveness» where the effectiveness of institutional economic policy is viewed as the main characteristics aimed at involving more human, capital and natural resources which will entail a stable growth of the population welfare.
- Based on the research and analysis of international best practices in increasing the competitiveness of the economy, the fundamental factors of increasing competitiveness were identified and the possibilities for their application in the RA were specified.
- Using the econometric model, analysis of the competitiveness factors of the Armenian economy was carried out, which made it possible to determine the circle of the most influential factors and identify the possibilities for the optimal use of their potential.
- A new model of structure of competitiveness and new formula were worked out. The competitiveness of national economy is divided into five categories: economic efficiency, technological development, human resources, effectiveness of management and productivity with appropriate components.